0579
I. 4

Հայրիկ? գրպարան!

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԷՐԱԳԻՐ

Ազգային եւ Միջազգային

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ.

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique.

PROPRIÉTAIRE - RÉDACTEUR

Armène Lcussinian - Constantinople

هانراقيداق {مجموعهٔ علوم}

غزته‌سنك صاحب امتياز و محرری درسعادتده

آرمن لوسينيان

Գ. ՇՐՋԱՆ — 1899 ՀՈԿՏԵՄԲԵՐ 17 — ԹԻՒ 73



ՍԿԻՏԹԵՈՍ ՍԿՍՈՒՐԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային եւ Միջազգային

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ.

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique.

PROPRIÉTAIRE - RÉDACTEUR

Armène Lcussinian - Constantinople

هانراقيداق {مجموعهٔ علوم}

غزته‌سنك صاحب امتياز و محررى درسعادتده

آرمن لوسينيان

Գ. ՇՐՋԱՆ — 1899 ՀՈԿՏԵՄԲԵՐ 17 — Թիւ 73



ՍԿԻՌԹԷՈՍ ՍԿԻՌԹԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

1899 ՀՈԿՏ· 17Ի ՄԵԾԱՆՈՒՆ ՅՈԲԵԼԱՐԻՆ

Մ. Մամուրեանի Յոբելեանին ի պատիւ, կը հրատարակենք իր կենսագրու, թիւն՝ համառօտակի. պատկերն ալ ճակատը: *Հանրագիտակ* այս կերպով մատուցած կը համարի առ Յոբելարը իր պատուոյ Մեծարանքը:

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ծնած է Իզմիր 1830ին։ Եօթը տարեկան էր երբ ծնողաց հետ, ժանտախտէ խոյս տալով՝ Շիրա կղզին կ'ուղեւորի· ուր կը գտնուէր իր մօրը հայրը՝ Մուրատ, նշանաւոր ակնավաճառ և մեծ ազդեցութեան տէր։

Իր հայրը՝ Յովհաննէս՝ ընտանիքը Մուրատի խնամոց թողլով ի Շիրա, յ'Ալէքսանդրիա կ'անցնի գործ գտնելու համար, և Մատթէոս՝ իբրև անդրանիկ որդի՝ մատղաշ հասակէն կ'սորվի ընտանիքի հոգը ստանձնել։ Իր հայրը, Եուսուֆեանց Պօղոս պէյի շնորհիւ, մաքսատունը պաշտօն կը գտնէ Ալէքսանտրիա, արդէն տարիներ առաջ եղբարքը Գահիրէ բնակած էին։ Երկու տարի ետքը՝ Մատթէոս Ալէքսանդրիա իր հօրը մօտ կ'երթայ ընտանեօք։ Մայրենի լեզուին պէս կը խօսէր յունարէն և արաբերէն յ'Ալէքսանտրիա, ուր երեք տարի կը մնայ, և առաջին անգամ դպրոցի երես կը տեսնէ, չ'է թէ հայու, վասնզի հայու դպրոց չ'կար, այլ յունական դպրոց, ուր մուտքը կը յանձնարարուի Պօղոս Պէյի կողմէ։ Հայրը տեսնելով՝ որ իր զաւակները հայերէնէ կը զրկուին, կ'որոշէ զանոնք Իզմիր զրկել որ Մեսրոպեան դպրոցին մէջ ուսում սովրին։ Ուստի Մատթէոս իր Ղուկաս եղբօրն հետ, առագաստաւոր նաւու մէջ կը դրուին՝ որ հազիւ երեսուն օրէն Իզմիր կը հասնի 1842ին, երբեմն հակառակ հովերու հանդիպելուն, երբեմն ալ խաղաղ ծովու։

Մատթէոսի համար նոր կեանք մ'է կ'սկսի՝ երբ Մեսրոպեան վարժարանը կը դրուի։ Կ'ուզէ յունարէնը շարունակել, բայց կ'արգիլուի՝ վասնզի՝ նոյն ատենի Մեսրոպեան վարժարանին կրթական կանոնացն համաձայն՝ պարտաւոր էր նախ Համաձայնութեան հանիլ և ապա օտար լեզու սորվիլ։ Դառն ու կսկծալի օրեր եղան Մատթէոսի համար այն օրեր երբ ինքն արդէն տասներկու տարեկան՝ 6-7 տարու տղոց հետ՝ աւազի վրայ տառեր գրել և հայերէն հեգել կ'ուսնէր։ 8-9 ամիսներու մէջ Սաղմոս, Կոչկոռ, Նարեկ կը լմնցնէ այն մեծահամբաւ դպրոցին մէջ՝ որու վերի սրահը Անդրէաս վարժապետ իր ծխափայտով և ֆալէֆանով պատկառանք կ'ազդէր, և Շահինեան վարժապետ՝ իր թակովը՝ սարսափ։ Անգամ մը յանիրաւի այդ թակն իր ափին մէջ իջնելուն՝ նորէն չ'երևար դպրոցը, և՝ դպրոցէն իր այս բացակայութեան ժամանակ՝ մինակն աշխատելով աւելի կը սորվի քան վարժապետին առջև։

Աղդականներու յորդորանօք նորէն ակամայ կ'մտնէ դպրոցն այլ ուրիշ դասատուի մը աշակերտելու, այս է, տիրացու Գրիգոր որ՝ ծերութեան ատեն՝ Տէր Մարգար Վանանդեցի եղաւ, որ աղուոր գիր ունէր և կոկիկ խօսքեր։ Մատթէոս անյագ փափագ ունէր ուսման, գիշեր ցերեկ կ'աշխատէր և, մէկ ու կէս տարուան մէջ, աւարտեց ինչ ուսմունք որ դասատուն կ'աւանդէր, այսինքն ոչինչ բան· չոր քերականական կանոններ, չոր թուաբանական գործողութիւններ, չոր ոտանաւորներ։ Բայց և այնպէս իրրև հրաշալիք՝ մատով կը ցուցուէր իր ծանր, խոհեմ բարուց

և ուսումնասիրութեանը համար, թէև ինքն իրմէ և սորվածէն գոհ չ'էր։ Ժամանակն հասաւ որ Անդրէասին աշակերտէ, այն միջոցին որ Ոսկաններ, Մարկոսեաններ դպրոցին վայելուն աստղերն էին։ Բայց հաղիւ թէ մեծ վարժապետէն հայերէնի և մի քանի ամիս Ֆռանսերէնի դաս առած էր երբ 1845ին Իզմիրի մեծ հրդեհը պատահելով՝ գրեթէ բոլոր հայոց թաղը լափեց, և Մատթէոսի ծնողքը, որ Ալէքսանտրիայէն դարձած էին, տունով տեղով մոխրի վրայ նստան։ Այն ժամանակները Բարիզի Մուրատեան վարժարանը պիտի բացուէր, և Վ. հայր մը, կարծեմ Ղևոնդ, Իզմիր ալ հանդիպեր էր որ աշակերտ հաւաքէ։ Մատթէոս՝ որու խելքը, միտքը ուսմանց ետևէ էր, և որ ստէպ դիշերուան մեծ մասը կարդալով կ'անցնէր, միջոց կը գտնէ Վ. հօր ներկայանալու և կ'արձանագրուի անոր Տոմարին մէջ՝ իբրև ընդունելի։ Իրօք քանի մը ամսէն ետք Եպզբճեան Վ. Ստեփան Վարդապետ կ. Պոլսէն խել մը աշակերտներ առած՝ Իզմիր գալուն և միայն քանի մը ժամ մնալուն՝ Շոգենաւուն մէջ Մատթէոս այս գալուստը ուշ կ'իմանայ և հաղիւ կարող կը լինի տոմսակ առնելէն ետև՝ ինքզինքը շոգենաւը նետել, լոկ իր վրայի զգեստով և վերջին անգամին՝ ընտանիքին իսկ մը նաս բարով ըսել չկարենալով։ 1845ին կը մտնէ Մատթէոս, Փարիզի Մուրատեան վարժարանը, հաղիւ՝ վերջին տարիներն՝ երբ Այվազովսքի վերատեսուչ կը կարգուի։ աշակերտները կը սկսին բան սորվիլ։ Դիշերները դաղտնի լուղ և պատրոյգ ճարելով սենեկին ծակը ծուկը վրագուրելով (ըստ որում ճրագ վառել արգիլուած էր) կը լափէր, դասերը պատրաստելէն ետև՝ դպրոցն արգիլուած գրքեր՝ զոր Ֆռանսացի դասատուին և Տօքտոր Շիշմանեանի մատենադարանէն առնելու արտօնութիւն ունէր, տուածը չմատնելու և չմատնուելու պայմանաւ։ Երկար դիշերները կարդացած էր 18րդ դարու հեղինակներու գործերը, և իր սենեկին մէջ աւելի լոյս առած էր քան թէ դասարանին մէջ։ Ուսմանց հինգերորդ տարին՝ այս է 1850 ին՝ վերջին քննութիւնը տալէն և Լամարթինի ձեռքով դափնեայ պսակ ընդունելէն ետեւ, իբրեւ մրցանակ պիտի մտնէր Կրենեօնի երկրագործական դպրոցը՝ քանի մը տարի եւս ուսմունքը շարունակելու, երբ ընտանեկան ձախորդութիւնք կ'ստիպեն ծնողքն ետ կանչել Իզմիր զՄատթէոս, որ վշտաբեկ կը թողու Փարիզը, և կը դառնայ Իզմիր 1850ին սկիզբները։ Ընտանիքն իր օդնութեան կարօտ ըլլալով Մատթէոս անմիջապէս պաշտօնի ձեռք դարնելու պէտքը կ'զգայ։ և Աղաբեկեան Մարկոս էֆէնտիին խորհրդով կը մտնէ տաժանելի ասպարէզ մը, այս է դատաստութեան։

Երկու ընկեր գործի կ'սկսին։ Նոր անկախ դպրոց մը, Աղաբեկեան Սարգիս էֆէնտիի ձեռքով, վարժարան մը կը հիմնեն։ 50—60 աղջիկ ու մանչ աշակերտներ կ'ունենան, երկու տարի մեծ յաջողութիւն կ'ունենայ գործը, բայց յետոյ հակառակորդաց չնորհիւ՝ կը կործանի վարժարանը։ Այն ատեն, առաջին անգամ կը թարգմանէ Վոլթէրի Զադիկը և ապա Մէյրս-Մեղս, Ճերմակ-Սև- և Ժան-Բոլէն իմաստասիրական վէպերը։ Իր ընտանիքին պիտոյքը հոգալու ստիպեալ, Մատթէոս անգործ չէր կարող մնալ։ Ուստի Իզմիրէն կը մեկնի, և Պոլիս կը դիմէ իր բոլոր յոյսերն, զգացմունքն ու փափաքները սրտին խորը պահելով։ Հասգիւղի Ներսէսեան երկսեռ վարժարանը՝ իբրեւ տեսուչ կը կարգուի՝ 1852ին, եւ անոր նոր ուղղութիւն մը տալ կը ջանայ որչափ որ դպրոցին անձուկ դրամական միջոցները կը ներէին։ Նոյն դպրոցին դասատուներէն էր նաև տիրացու Պօղոս, յետոյ Ներսէս Պատրիարք։ Կը վարէ գրեթէ

երկու տարի այս պաշտօնը՝ եւ երբ Իբրիմի պատերազմը կը ծագի՝ կը յորդորուի Արեւելեան Անկլօ-Թուրքական զօրադնդի մը մէջ թարգմանութեան պաշտօն վարելու իրթալ ի Պէօյիւք-Տէրէ մի քանի բարեկամներով. որոց մէջն էր նաւ Պօղոս Վարժապետեան։ Սակայն մի քանի ամսէն յետոյ՝ քօլերայէն բռնուելով խոյս կուտայ եւ կը դառնայ նորէն Հասգիւղ, ուր մի քանի ամիս եւս դասատուութիւն ընելէն ետեւ՝ Փիշմիշեան Նշան աղային տունը կը մտնէ իբրեւ դաստիարակ և դասատու զաւակացն, որոց կ'ընկերակցի ժամանակ մը Համամճեան Սարգիս էֆէնտին իբրեւ աշակերտ Մամուրեանի, Այն ժամանակ առաջին անգամ կը տեսնուի Օտեան էֆէնտիի հետ, որ Ազգային կանոնագրութիւն մը (1) խմբագրելու խորհրդով վառուած էր Այլոց հետ։ Եւ իր գրիչը սրել կը փորձէ Եէ-ակի դէմ, որ զինքն անհաւատ կը հռչակէր, Վօլթէրի մի քանի գործերը թարգմանելուն համար։ 1856ին ճէզայիրլեան Մկրտիչ Ա...ի մօտ, Զօրայեան Նիկողոսի տեղ, իբրեւ թարգման-քարտուղարի պաշտօնով կը կոչուի, եւ Մալթա կ'ուղեւորի, ուր կը դանուէր նոյն միջոցին յիշեալ Ա....

Մալթայէն Մամուրեան Անգլիա կ'անցնի ծովով եւ ամիրային հետ դրեթէ երկու տարի կը մնայ Լօնտոն, ուր պատիւ կ'ունենայ նոյն ժամանակի նշանաւոր նախարարաց Լորտ Բեանսֆիլդի եւ անոր յանձնարարութեամբ տեսակցիլ ի մէջ այլոց, նաւ Լորտ Բուլմերստոնի հետ։ Նոյն միջոցին փարիզ կ'երթայ անգամ մը եւ մի քանի ամիս կը մնայ, Պ. Գարեգին, Յ. Բարահետեանի հետ(2)։

Յետոյ Ս. Բէթէրսպուրգ կ'ուղեւորի 1858ին, և որովհետեւ Պալթիկ ծովը դեռեւս նաւարկելի չէր, ձմեռուան պատճառաւ, ցամաքի ճամբով կ'երթայ և Պրուքսէլ, Հանովր, Մակէպուրգ, Պերլին կը հանդիպի եւ քիչ շատ մնալով՝ կը հասնի Քէօնիկսպերգ, եւ կը մտնէ Ռուսիոյ սահմանը, Նիէմէն գետէն, եւ Թիլսիս, Ռիգա եւս դադար առնելէն ետեւ՝ կը մեկնի եւ կը հասնի 1858 ապրիլին Ս. Բէթէրսպուրգ ուր երկու ամիսի մօտ կը մնայ եւ վերստին ճամբայ կ'ելլէ Ամիրային հետ վերադառնալու Կ. Պոլիս։ Այս անգամ Պալթիկ ծովու վրայէն կ'ուղեւորին այնպէս որ Քրոնշդատէն երնելով Համբուրգ եւ ապա վերստին Պրիւքսէլ մի քանի ամիս կը մնայ, եւ Փարիզ գործով երթալէն ետեւ, Վիէննա և անկից Թրիէստի ճամբով ճէզայիրլեանի հետ կը մտնէ Կ. Պոլիս, ուր կը յուսայ իր աշխատութեան պտուղը քաղել անոր գործոց յաջողութեամբ, բայց նեղութիւնը պաշարել սկսած էր զճէզայիրլեան, և Մամուրեան, թէև դրեթէ անգործ եւ անվարձ կը շարունակէ մնալ Նորա մօտ, անոր խնդրանքովմինչդեռ միւս կողմէ իր ընտանիքին նեղութիւնն ու ապրուստը զինքը կը տագնապէին։ Նոյն միջոցին իր հայրենիքը կ'երթայ եւ մի քանի ամսէն կը վերադառնայ, միշտ ճէզայիրլեանի տունը մնալով, եւ պարապոյ ժամերուն Ֆէլդէնը կը թարգմանէ, Անգլիական Նոմականեր գրելու կը սկսի Իզմիրի Մէրրիէ հանդէսին համար, որ ապա Կոնստանդ Հայոց Աշխարհի մէջ մասամբ կը հրատարակուի ինչպէս նաեւ Լօքի Դոգմատիքոնը։

1860ին Ազգ. Օրինաց Կաղմական կուսակցութիւնը(3) սկսեր էին, Մամուրեան ջերմ պաշտպան, նոյն ատեն յուզող խնդրոց՝ կ'սկսի բուռն յօդուածներ տեղացընել հայ մամուլին մէջ այլ և այլ անուններով։ Գիլիաւորապէս Օտեան, Ազատօն

(1) Ազգային Օրէնքին և Անոր Ներքին Կանոնագրութեան Հեղինակ ճանչցուած է Տոգդոր Նահապետ Ռուսինեանը՝ որ կենսագիրն եղած է նոյն ինքն Օտեան էֆէնտի։

(2) Նոյն ատեն հոն փափաքուած պարբերական հրատարակութեան մը խորհուրդը չի յաջողիր։

(3) Այսինքն լուսաւորնալի և-խաւարեալի կուսակցութեան կոչուածները։

Դրիգոր և Մինաս էֆէնտիներուն հետ սերտ յարաբերութիւն կը հաստատէ։ 1861ին Սարգիս Պատրիարքին կողմէ դիւանապետութեան պաշտօնի կը հրաւիրուի, եւ այս մասին ճէղայիրլեանի թոյլտուութիւնն ալ կը խնդրուի։ Սակայն յանձն կ՚առնու թոյլ տալ Մամուրեանի ստանձնել այդ պաշտօնը, և քիչ ատենէն մահը վրայ գալով՝ իր հետ կը տանի մեծ դումար մը՝ զոր Մամուրեանի պարտաւոր էր, յետնեալ ամսականաց արդիւնք, այնպէս որ Մամուրեան իր 32 տարուան հասակին մէջ կը կորսնցնէ իր աշխատութեան վարձքը և նորէն այր ու բէնէն կը սկսի, իր կռնակն ունենալով մայր, քոյրեր և եղբայրներ, բայց առանց վճառութեան գործի կը սկսի, կը վարէ դիւանապետութեան պաշտօնը նոյն ատենի հանրային խնդրոց ամենէն փոթորկալի ժամանակները, մինչև 1866։ և Էրզրումեան և Համամպոլեան խնդիրներու մէջ կը նեստուի, և թէպէտ դիւանապետ, Պօղոս Պատրիարքին արարմանց դէմ, ի վնաս իր շահուն, յօդուածներ կը գրէ, կ՚ուտայ լրագիրներու, որոց մէջ նշանաւոր էր Դէպոշ հայ մը ստորագրութեամբ Մէճմուայի մէջ հրատարակուած գրութիւն մը որ բաւական մեծ յուզմունք կը պատճառէ...։ Նոյն միջոցին, Իզմիրի ուսումնական խորհրդոյ կողմէն հրաւէր կ՚ընդունի տեղւոյն Ազգ. վարժարանաց Տեսչութիւնը ստանձնելու, բայց պայմաններու վրայ չկրնալով համաձայնիլ կը շարունակէ դիւանապետութեան պաշտօնը, ինչպէս նաև քաղաքական, կրօնական և Ընդհանուր ժողովոց ատենագրութիւնները կը խմբագրէ, ինչպէս որ Պատրիարքարանի մէջ իր ստորագրութեամբ արձանագիրներն կը վկայեն։ Այն ատենները կը խմբագրէր նաև Ծաղիկ հանդէսը, որու խմբագիր-մենօրէն Գրիգոր Զիլինկիրեան էֆէնտին Իզմիրի մէջ կը հալածուէր իր Հանդէսին հետ, եւ որ ամենայն վստահութեամբ իր թերթը Մամուրեանի յանձներ էր։ Նոյն միջոցին կը ծանօթանայ աղնուախոհ Մուրատեանց Գարեգինի հետ, այժմ եպիսկոպոս եւ Իզմիրի Առաջնորդ, և Անոր կ՚աջակցի(*) իր գրիչով։ Սակայն Ազգ. Օրինաց հակառակ կուսակցութեան եւ Համամպոլեան բարեկամները կը յաղթանակեն, Պօղոս Սրբազանի հետ։ Երեւելեաց Դասը Երեսփոխանութեան կը կոչուի։ Նէվրուզեան Յովակիմ էֆէնտին, օրինաց եւ ազգային հանգանակութեան նոր ծրագիր մը, նոյնպէս ներքին Կաղմական Կանոնագրութեան հաստատութեանն անվերջ պաշտպանը՝ որ հոգին էր զարգացեալ կողմին ու սրտակից բարեկամեւ խորհրդակից Մամուրեանի, ազգային ասպարէզէն վճատեալ կը քաշուի։ Ինչպէս նաեւ Մամուրեան՝ որ այնուհետեւ իր սիզբանց համար վստահութիւն չ՚ազդեր նորընտիր վարչութեան եւ Պօղոս Պատրիարքին, որ Քաղաքական Ժողովին մէջ անգամ կը յայտարարէ թէ, կամ Մամուրեան դիւանապետութենէն պէտք է հրաժարի կամ ինքը պատրիարքութենէ։ Բայց Մամուրեան արդէն իր ներքին համոզման հակառակ չգործելու համար, հրաժարիլ կ՚որոշէ, եւ սակայն տաժանելի դժուարութեամբ և ՀՕասով կ՚ստանայ իր անվճար ամսականները։ Իր հօրը հիւանդութեան լուրը առնելով (1865) կը փութայ Իզմիր և Անոր վերջին օրհնութիւնն ստանալէն ետեւ՝ ամիս մը չափ կը մնայ իր սգալի ընտանեաց քով եւ ապա վերստին Կ. Պոլիս կը դիմէ իր գործերը կարգադրելով հայրենիքը վերադառնալու դիտմամբ։

Պատրիարքարանի պաշտօնին այն բաղմաղբաղ ժամանակները, Մամուրեան միջոց կը գտնէր գրական գործերու պարապելու, երբ Բերայի մէջ թատրոնը հուշակ կը հանէր, կը թարգմանէր Մ-

(*) Էջմիածնայ Կաթողիկոսական ընտրաբարուած իրաւացն և Հայրապետական Գահ, հուն անկախութեան դատը պաշտպանելու համար։

նոսպանի Աղբրին և Սեվեյլ Սուրբին թատերգութիւնները, և Մոդէլի մէջ կը շարունակէր Հայկական նամականին վրայ ստորագրութեամբ։

1866 օգոստոսի մէջ Մամուրեան Իզմիր կը վերադառնայ գրեթէ 12 տարի անցնելով Պոլիս, որ իր երկրորդ հայրենիքը դարձած էր՝ եւ երկու տարիէն աւելի՝ Եւրոպայի այլ եւ այլ Ժաղաքները։ Իր շատ մը յոյսերը եւ խորհուրդներն ի դերեւ ելած տեսնելով՝ պահ մը կը վհատի, ամէն բանէ յոյսը կը կտրէ, անշուք սահմանի մէջ անշան ապրիլն յանձն առնելով, սակայն իր անգործութիւնն մահ էր իրեն համար, և ամուսնական կենաց մէջ մտնելով, գործունէութեան և հայրենասիրութեան նոր ասպարէզ մը կը բացուի իր առջև։ Աշխատութիւնը կենաց անհրաժեշտ մէկ օրէնքը ըլլալը գիտնալով՝ անոր մէջ կը ջանայ գտնել գտնէ բարոյական եւ մտաւորական անկախութիւն մը եւ զանազան գործերու կը ձեռնարկէ, գրական եւ դաստիարակական սահմանի մէջ։ Կը հրատարակէ Կէօթէի Վէրթերը, Մոլէրի խմբագրութեան պաշտօնը վեց ամսոյ չափ Իզմիրի մէջ կը շարունակէ։ աղգային դպրոցներու մէջ դասատուութեան պաշտօն կ'սկսի, Տէտէեանց հրաւիրանօք թարգմանութեանց կը պարապի, այլ եւ այլ կիսկատար հեղինակութիւնները կը լմնցունէ, 12 տարուան մէջ 50-60 կտոր գործ ի լոյս կ'ընծայէ։

1871ին Արէ-Ելեան Մոլը խմբագրութեան կը ձեռնարկէ եւ ցարդ կը շարունակէ։ Արդէն աղգային վարժարանաց տեսչութեան կոչուելով տասը տարիի մօտ նոյն պաշտօնը վարեց, զանց չ'ընելով մասնաւոր եւ եւրոպական դպրոցաց մէջ դասատուութիւններ։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՑ

Մամուրեան աւելի ընդարձակ ասպարէզի մէջ աւելի լաւ կացութեան մէջ, Թերեւս տանտպատիկ աւելի գործէր ու փայլէր... իր դաղափարները, իր խորհուրդները, իր զգացմունքը, իր սրտին ու մտքին խորը ստէպ պահելու կը դատապարտուի։ Թէ մարդերու եւ թէ իրերու վրայ... աւելի կը խորհի քան կը խօսի, աւելի կը գրէ քան կը գործէ։ և համոզուած է որ հայ գրագէտ մը երբէք չպիտի կարենայ փափաքածին պէս ծառայել միջոցներու... պակասութեան պատճառաւ։ Իր երիտասարդութեան ժամանակէն իր ընտանեաց զոհ, միշտ բաղդի հարուածներուն եւ մարդկան անիրաւութեանց, երբեմն զրպարտութեանց ենթակայ։ իր ընտանեկան շրջանին եւ մի քանի ընտիր ու անկեղծ բարեկամաց մէջ գտած է իր գրեթէ վհատ սրտին ու մտքին սփոփումը...։ Հպարտ այլ ո՛չ դոռոզ, աղնուախոհ այլ ո՛չ մեծաբան, ներհուն այլ ո՛չ պարծենկոտ, դիտող եւ մերթ հեգնական։ Աշխոյժ կ'առնումանաւանդ երբ Ազգին բարւոյն և ճշմարտինհամար խօսելու կ'ելնէ, իր սովորաբար անխօս լեզուն կը բացուի։ Փառասիրութիւնը ոչ նուազ կ'արծարծէ իր զգացմունքը եւ ուրիշ իրերու նոր մարդ, նոր ճառագայթներով կ'երեւի, մինչեւ անգամ անոնց՝ որ զինքն ստէպ կը տեսնեն։

Ծանօթ։ Լոկ Մամուլ անունով յղացած է, սակայն նոյն ատենի՝ ինչէս նաև մեր ատենի ալ՝ մեծ Բանիմացը՝ լսելով, Մամուլ անունը, անով իր Թերթին անունը մկրտել կը կանխէ։ Մամուրեան էֆէնտին ալ կը պարտաւորի Արէ-Ելեան բառն աւելցնել իր Մամուլին վրայ, որոշելու համար Զմիւռնայի Մամուրեան մամուլը Պոլսոյ Ա-վաղեան Մամուլ հանդուցեալ գաւեշտաթերթէն։

ՅՈԲԵԼՈՒՂԵՐՁՆ ԻՄ

Առ հոյակապ Յոբելարն Հոկտ. 17ի

ՏԻԱՐ ՏԻԱՐ ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Իմ վաղեմի եւ պատեալի բարեկամս եւ երբեմնի հանճարեղ Տնօրէնն իմ նորակառոյց Հռիփսիմեան եւ Մեսրոպեան երկսեռ վարժարանացն

ի ԶՄԻՒՌՆԱ.

Ով՞ է ան՝ Մա՛րդն՝ ոյր Անունով իմացական Աշխարհն Հայուն
Համակրանաց ու հիացմանց բոց եռանդով մ'ելեքտրա-ցած՝
Թնդայ այսօր, որպէս թնդայ Տաճարն յ'Անուն Եհովա-ին.
Մա՛րդն՝ ոյր հռչակն ամենուրեք՝ զինչ բիւրաթեւն Համբաւ՝ թռչի,
Բամբռէ բամբիռ՝ որպէս նուագ, որպէս Աղօթք՝ չրթնէ 'ի շուրթ.
Սրտէ ի՛ սիրտ՝՝ նո՛ր ներշնչում, պաշտի՝ պէս Հոր մ'Հանուրց մտքին.
Եւ ցո՛ր խորշեր թափառական ձգին Եզերքն Հայ բար-բառոյն.
Գահ մը պատուոյ, Բեմ մ'անդ ունի, Ակումբ մ'Իրեն Ջերմ Ծափահար.
Մա՛րդն՝ Ոյր փառքը պատմել մրցին եւ Հանճարը աստուածարել.
Ոյր Անուան շուրջ՝ Ազգն համօրէն՝ ի՛ մի մարմին՝ թա-փօր դառնայ.
Ազգն՝ Ի՛նքն՝ իր սիրտ կանգնած խորան. ի՛նք քահա-նան պատարագիչ,
Ի՛ Նմա տօնէ յիսուն ամաց երկամբք բեղուն կեանք մը մտքի.

Միտք մ՛որ կեանքի յաւիտեաններն ունի մոքին իր յիշատակ։

Եւ մեծհանդէս տանի այսօր զԱՑՆ ի՛ Տաճարն Հայ Մուսայից։

Որպէս երբեմն ոստ՝ ի՛ ձեռին, և ի՛ շրթունս՝ ովսաննաներ,

Մերք, տղայք տարին Բանն Աստուածը անդր ի՛ տաճար մեծ Անմահին։

Դալար դափնեօք արտախուրած իւր վեհապանծ ճակատը բուրդ։

Ուստ Հանճարը, յիսուն ամեր, իշխանաբար վարեց մեր միտք։

Պիտի՝ վարէ ինչպէս եւ դեռ, ցո՛ռչափ տպրի մեր Հայ Լեզուն։

Կը տանինք հոն։ որպէս փեսայ, քողքած պատուոյ մեհեւանդիւք։

Թարմ՝ չափ գարնան, ամրան չափ՝ տաք, աշնան պէս նամ, ձեան պէս ճերմակ,

Եօթանասուն եւ իւր ամեր։ Եօթանասնից չափ՝ երկնաշունչ,

Պերճանաց շար ու ծիրանի գումարտակած յ՛ուսն Ատլասեան։

Եւ իւր յիսուն ամաց վաստակ, ճոխ քան զ՛ամեն կտակ առ մեզ։

Զեռքը բեռցած։ ձեռք՝ որ-այսօր՝ Տօնողներուն շըրթանց ներքեւ,

Մասո՛ւնք բուրէ, զինչ խնկահոտ մագաղաթեայ մատունք նախնեաց։

Դրիչը սուր՝ պողովատիկ, կախած մէջքը միշտ Հ՚գոտեպինդ,

Իսկ գործերն՝ Դլուխք գործոց, Թա՛դ իր գլխին սպիտակափառ։

Իւր սաներու գունդագունդը եւ գրոհներն իւր համակրողաց,

Հոգիք ամեն, հոգի՛քն հայուն Իւր փեսաւեր աշխարհախուսմբ։

Ու Ազգընտիր, աստուածարան Հայրապետն ալ պարթեւհասակ։

Խա՛չովը քաջ՝ քաջ Հովիւը։ Մելքիսեդեկ Տէր Մուրատեանց։

Լուսաւորչայ խոյրն ի՛ գլուխ, ձեռքը՝ մական Ներսէսներուն,

Դարքն ու նախնիք վերկենցաղող շարականներն՝ երգ ի՛ բերան։

Հայ Դպրութեանցն Ոգւով վառեալ, նոր սուրբ Սահակ ու սուրբ Մեսրոբ,

Մանդակունւոյ, Որոտնեցւոյ քարոզն ի՛ շուրթն իւր հոգեշունչ։

Կարդած մեր Գլուխ, Գլուխն ընտրեալ Հօտին փոքու.

Ու ամենուս պատկառանքը՝ իրեն շուրջառ, ամպհովանի։

Եւ Դու, Վրո՛յրդ անտիական, եւ Դու. Վա՛հէ, վա՛րդ պարմանիդ։

Երկւորեակին ճաճանչները Ձեզ աստղաբիր աչք ու դիտակ.

Ծիածանը՝ Ձեզ ծիրանի, Որիոնը՝ Ձեզ ուղեցոյց,

Երկնի կապոյտ հայելւոյն մէջէն ճառագայթող անմահ Դէմքեր.

Հայր Աստուածին ծոցէն, ծնկէն կաթա՛ծ ժպիտ, թռա՛ծ Քերոբ,

Վաթարշամ Ձեր Հոգեակներ՝ մեզ պլլուած շուշան թեւեր.

Բրաբիոնն՝ ի՛ Ձեր ձեռին, Լուսանարօտն՝ ի՛ ձեր ճակատ.

Ձեր կարօտովն, ա՜հ, պապակուն մեր շրթներաց համբոյրն ի՛ շուրթ.

Շողի, շաղի պէս շարմաղուն, մեր բազկաց մէջ՝ պահ մ՛օրօրուն.

Պահ մը Մօրկանդ, պահ մը Հօրկանդ՝ թառած պահ մ՛ալ ծոցն Ախպարկիդ.

Զինչ ջուխտ տատրակ՝ դարձած բո՛ւն բոյն, չորցնելու անոնց արցունք.

Զինչ ցոլ չորցնէ ցօղին արցունք, թաշկինակաւն սիրտ-փանքին.

Եւ Դո՜ւ, Մա՛ռի. Դո՜ւ, Թա՛գուհի, արդ Յիսուսին յաւերժհարսունք.

Եւ դո՛ւք, Հա՛րք, Մա՛րք, Եղբարք ու Քոյրք. դուք սիրելիք երկնաբնակ,

Ձեր սրտերը՝ ի՛ մեր սրտեր, դուք ալ ամպէն մեզ պարակից.

Մեր զգայմանց ծրարները, սիրոյ, պատուոյ Փո՜ւնջ հոգեձօն,

Իրեն փառքի յաղթանակին զարդակամար ծիածանած,

Բիւր ծափերու, կեցցէներու մէջէն տանք Անցքն յաղթականի.

Ցանե՛նք ծաղիկ մեր ցնծումներ, ու գո՜րգ սիրեանք մեր յակնիռներ.

Ցանե՛նք ոսկին ու մարգարիտ, Հանդէս-Թագին վա՜ռ ճաճաչներ,

Տանի՛նք փեսան յ՛իւր Առագաստ. ի՛ Բանթէօնն Ցոբելեանին.

ՓԱՌՔը տալու Իրեն Նոր Հարս, Անմահութիւնն՝՝ իրեն ՊՍԱԿ.

Եւ Ցոբելեանն իր յիշատակ, Տիտղոս պատուոյ ու Մըրցանակ։

Մաղթե՛նք ապա, Մաղթե՛նք բերնովին Հայրապետի, դեռ
շա՛տ ապրի։
Զիւնածաղիկ եւ Իւր ամեր Հայ գրական Ծաղկա՛ստա-
նին,
Հոսեն դեռ շատ արծաթալեակ ու ոսկեծոր Լուսաղ-
բիւրներ։

Դու՛ք էք ԱՆ՝ ՄԱ՛ՐԻՆ, Ո՛Ռ ՄԱՄՈՒՐԵԱՆ։
Մամլոյն մեծ մարդն ամեն օրուան,
Մեծ Մարդն Ազգին։ Հա՛յ ճշմարիտ։
Ճշմարտութեան Դու մարգարիտ։

Հայ գիրն ու գիրք ցո՛ւշափ խոսին,
Պի՛տան փառքիդ իրենց դափնին,
Եւ Անուն քո՝ ո՛Ռ ՄԱՄՈՒՐԵԱՆ,
Պիտի մնայ Ներշնչարան։

Տուիր լեզուդ, լեզո՛ւ Ազգին,
Ու Հայ Մամլոյն եղար հոգին։
Բարին, Վսեմն ու Գեղեցիկ
Եղան պատգամքդ երկնաշնչեցիկ։

Մամուլդ, ՄԱՄՈՒԼՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ՝
Վեհ մտածմանց ճոխ թանգարան։
Եւ Քո Մատեանք լուսածրար՝
Մեզ ճաշակին շքեղ տաճար։

Գրի՛չդ կտրիճ, անպարտելին
Արիստարքը՝ դէմ Զոյիլին,
Դէմ Սոփեստին՝ Արիստոտէլ,
Ու Հայ Մանկան՝ նոր Ֆրոպէլ։

Պիտի պատմեն դարք դարերուն,
Յաւ Հայ սերունդք՝ սերունդներնուն,
Այդանուագ կո՛ւռք Մեմնոնեան։
Գրչիդ փառքը քո անվախճան։

Արմէնազուն հոգեացն համար՝
Գաղափարքդ՝ փարո՛ն ի՛ ժայռ,
Հայ կուսին ձեռք՝ լապտե՛րն անշէջ,
Ապագայի հարսնիքին՝ մէջ։

Կեանքդ համակ գե՛տն է մտքին,
Իւր ակունքը մեզ անքընին,
Ցո՛ւր ուր հոս է՝ կ՚ոլասիսէ
Սահարան իսկ կ՚արգաւեստէ։

Կո՛ղն էք հրաշք, կո՛ղն Ցիսուսին.
Աւիշքդ անգամ լոյս կը հոսին,
Թէ խաչ տուին Քեզ Գողգոթայ
Աղգն ողջ ահա Քեզ ովսաննայ։

Ընտիրքն Հայոց՝ որպէս Մոգեր,
Յորելեանիդ ընծայաբեր.
Պատուեն միջոցն, հոսին հոն՝ ուր
Փառքիդ, պատուոյդ է խանձարուր։

Զի՞ փոյթ քեզ թէ խաբչիկն հայուչ.
Նետէ արփւոյդ անվայելուչ.
Փայլէ՛, ցողէ՛ հոլիզոնէն,
Արտդ, արօան են մեր միտք ամեն։

Արծի՛ւ մտքի, թա՛ռդ է միշտ սար՝
Ամպոց, չանթից հրամանատար.
Աստղէն գողցած Քո առաւօտ
Տաս մեր մտքին բի՛ր անաղօտ։

Մեր Յգոստոս Վեհապետին
Սուր գրիչդ հաւատարիմ,
Սրտերն ամեն՝ ամեն հայուն
Սերտ հպատակ կապեց Գահուն։

Յաւիտեան մ'է կեանքդ կէս դար.
Հայ Դպրութեան նոր Ոսկեդար.
Վրոյր, Շահնուրն ու Մամուրեան
Հայ Մամուլին՝ Ոսկեբերան։

Յորելեանովդ ա՛լ Զմիւռնիդ
Ուխտի տաճար՝ Ցիշատակիդ։
Հայ ուղեւորն՝ ուխտաւոր հոն,
Զօն արգադիր՝ Անդ այս Գեղօն։

Կ. Պոլիս։ 1899 Հոկտ. 17 ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

☛ Հանրագիտակը Դէմքեր ու Դէպքեր արձակին ոտանաւորի վերածումն է։

Յորելեանի Հանդիսին եւ Յորելարին նկատմամբ ամենուստեք մատուցուած Համակրանաց ու ընծայից հետաքրքրական, շահեկան ճշգրիտ ու խնամեալ ամբողջութիւնը. գալ անգամ, Յորելարին մէկ նամակին ձեռագիր տիպովն հանդերձ։

ԱԶԳԱՅԻՆ

ԴԷՄՔԵՐ ՕՒ ԴԷՊՔԵՐ

Հանրային ուշադրութեան արժանի օրուան ազգային դրաւուն, ակնախտիղ Դէմքն է Աբեղեան Մարտիրոս Պատկառելի Խմբագիրը. ինչպէս և օրուան ազգային նշանաւոր մեծ դէպքն է նոյնպէս Սև Լեռի Մարդասէր Հեղինակին Ցոբելեանը։

Կը կատարուի Այն այսօր Զմիւռնիի Հայրապետապատիւ Հովուապետ Մուրատեանց Մելքիսեդեկ Արք-Եպիսկոպոսի հանդիսաւոր Նախագահութեամբ, և Զմիւռնիի ազգային թէ օտարազգի, պաշտօնական թէ անպաշտօն երկսեռ հոծ ու ճոխ բազմութեան մը շքեղ ներկայութեամբ, նարնջենեաց երկիրը՝ Ցո, Նիոյ մայրաքաղաքին մէջ։

Ընդհ. Հայոց համազգային Տօնի մը դէմքն առաւ Մամուրեանի Ցոբելեանը, որ տեսակին մէջ Առաջինն է Թուրքիոյ Հայոց համար. ինչպէս որ Մամուրեանն ինքն ալ առաջինն եղած է իր տեսակին մէջ, և ամենէ աւելի ժողովրդականութիւն շահած հանրածանօթ Մարդը՝ իր վարած ազգային պաշտօններովը, յօրինած, հրատարակած գրքերովը, խմբագրած մամուլովը և ունեցած հանրագիտական տաղանդովը։

Եւ այս բնական էր։

Գեղեցիկ Դպրութեանց Հայ աշխարհին մէջ, ո՛չ մի գրական քաղաքացի Մամուրեանէն աւելի ընդարձակ սահմաններ գրաւած է հասարակաց համակրանքին մէջ, և համարման այնքան հարուստ քուէներ շահած՝ որքան Ինքն։

Մամուրեան անունն այսօր գրեթէ Հայ գրականութեան հոմանիշն է։ Անոր վերածնութիւնն է։ Արևելեան թէ Արևմտեան հայ Մամուլն համաբարբառ հռչակած է զԱյն՝ Հայ գրականութեան Նահապետը և Հայ մամլոյն մշտնջենի Նախագահը։

Փարիզու Մուրատեան անդրանիկ ուսումնաւարտ աշակերտներէն մին. ինչպէս հոգեկան նոյնպէս և բնական ու բարոյական ձիրքերովն օժտեալ, ծաղիկ ու գեղեցիկ երիտասարդ, խայտակն ու խարտիշահեր, գեղուշ մազերով, վառվռուն աչքերով, բարակամիտ ու հնարագէտ, ճաշակովն ընտիր, կիրթ, նուրբ. փափուկ, գեղեցկագէտ ու ուղղագատ. բարքովն ազնուական ու պատուական՝, վարքն անբասիր ու հեղահամբոյր. մխեալ նկարագրի տէր, հին հելլենական թէ հռովմէական և 18 դարու Հեղինակաց իր ատենի վիպական, իմաստասիրական, գիտական ու բանասիրական դպրոցներու ծանօթութիւններովը, և ազգային հին թէ նոր դպրութեանց հմտութեամբն հասուն ու ներհուն, Կրաժելլի և Դանտէ անմահ Հեղինակին ձեռքովն ալ նուիրուած աւարտավարժի դափնեայ պսակն ի գլուխ՝ կը վերադառնայ Եւրոպայէն Հայրենիք. իր հետը բերելով նոյն ատենի Եւրոպական դաստիարակութիւնը, դպրոցական գիտութիւններն ու քաղաքակրթութիւնը։

Եւ ասոնցմով սպառազինեալ՝ և մինչև այսօր արևմտեան թէ արևելեան քաղաքակրթիչ մամլոյն, գրական, գիտական, հմտական և գեղարուեստական մատենագրութեանն ու շարժմանց ընդմիշտ օրն օրին հետևող ու ազգայնացող, իմացական յիսնամեայ գործունէութեան ազդեցուտ պաշտօնովը, նախ՝ վարած է թէ Պոլսոյ թէ Զմիւռնիի մէջ, իբրեւ Տնօրէն ու Դասախօս՝ մասնաւոր թէ ազգային ու միջազգային վարժարաններ, որք իւր հմտութիւնն ու համբաւը ժողովրդականացնելու առաջին ծաւալաստաններն հանդիսացած են։

Իբրև ուսուցիչ՝ ժմնցուցած է Ազգին ու Պետութեան պատուաբեր բազմաթիւ բարեկիրթ սերունդներ. որոց մէջ և որոց չափ ինքն ալ կոտորակուած բազմապատկուած, ընդարձակուած է և միշտ կը բեկբկի հոն հոգւովը,

մտքովը, սրտովն ու անունովը։ սերունդներ՝ որոցմէ շատերն՝ այսօր հայրեր, տուներ կը կառավարեն, և իրենց Տնօրէնին վարկն ու յարգը սնէ տուն, զաւակէ զաւակ՝ ժառանգութիւն կը կըտակեն։ Անոնցմէ ո՛չ սակաւք՝ առևտրական սեղանաւորական հրապարակի և արհեստական ասպարիզի մարդեր՝ հայ ժողովրդին առաջնակարգ, պատուաւոր, արդիւնաւոր դասերը կը կազմեն, և իրենց մտքին ու սրտին հեղինակը՝ իրենց օրերու հեղինակին չափ ջերմօրէն, ջերմեռանդօրէն կը պաշտեն, կը տարածեն։ Անոնցմէ սուսարադունդ դաս մալ՝ իբրև ուսուցիչ՝ իրենց կարգին՝ իրենք ալ վարժարաններ կը վարեն, ուսանողներ կը լուսաւորեն և իրենց վարժապետաց վարժապետին պատկառանքն ու տաղանդին ձիրքերը կը սփռեն։

Կան ալ անոնցմէ Ազգային կրօնական աւանդութեանց և դաւանութեանց բարեպաշտ պաշտպան ու պահապան պաշտօնեաներու խումբեր. իրենց հովուած հօտին աւետարանած վարդապետութեանց, ու ճշմարտութեանց սերմերուն հետ՝ կը ցանեն նաև իրենց մեծ վարդապետին սէրը, միտքն ու համբաւը, իրենց հառատացելոց հոգիներուն մէջ։ Անոնցմէն ընտիր մաս մ'ալ՝ պետութեան պաշտօնական շրջանակաց մէջ՝ արժանաւոր. տաղանդաւոր Աթոռակալներ՝ իրենց հանրօգուտ ու հանճարեղ ծառայութեամբն Ազգին ու Պետութեան պատիւ բերելէ զատ՝ անոնց ուժի ջիղերն ու գործունէութեան զսպանակներն ըլլալով հանդերձ, իրենց հոգեբան ու դիւանագէտ վարպետին հանճարոյն հռչակի ոսկեփետուր թեւերն են։

Իւր բազմահոյլ աշակերտուհիներն ալ՝ այսօր իրենց այրերու պսակ, ժրագլուխ ու տանտիկին մայրեր՝ հասուցած են Ազգին ու Երկրին օգտակար քաղաքացի թէ գիւղացի կրթեալ զաւակներ։ Մայրեր՝ որք իրենց կաթին հետ կը ջամբեն և իրենց մտքին մայր ու դայեակ դաստիարակապետին ակնածանքն ու դուրգուրանքը, քաղաքէ քաղաք գիւղէ գիւղ։

Մամուրեան՝ երբեմն քարտուղար համբաւոր ճէղայիրլեանի, նոյն ատենի Ազգային երևելեաց և պետական շատ մը՝ Արևելեան թէ Արևմտեան, մեծանուն անձնաւորութեանց հետ բանագնաց կը լինի ու անոնց կը ծանօթանայ, որով ընկերական բարձրագոյն դասուն դիւանագիտական մարմնոց հետ ալ կ'ունենայ հաղորդակցութիւն, և կը գտնէ, հոն ևս իրեն տաղանդը գնահատող ընտրեալ խումբ մը։

* * *

Երբ Պատրիարքարանի Ազգային իշխանութիւնը Մամուրեանն իրեն դիւանապետ կ'ընտրէ, Յոբելարն այն ատենի ազգային Պաշտօնէութեանց հոգին, ժողովոց ու ժողովականաց խորհրդականն ու Մենտորը կը լինի։ Եւրոպական դիւանաց համեմատ կը կազմակերպէ իւր պաշտօնատունն ու պաշտօնեաներ. դիւատունը դիւանատան կը դարձնէ։ Պատրիարքարանի նոյն ատենուան պաշտօնական գործողութեանց, թղթակցութեանց, արձանագրութեանց, և ուրիշ այս կարգի կարգ մը անկարգ բաներու կարգ կանոն կը յօրինէ, կը թելադրէ. անոնց ամենուն կ'ուտայ եւրոպաբարոյ քաղաքավար ուղղութիւն մը։ Պաշտօնական խեցբեկ կորճաբարբառը կամ պատուելական ֆէլէրով ապխաղուր լեղուն կը տաշէ, կը դուրէ, կրկոկէ, կ'իստիկէ, մէկ խօսքով՝ կը քակէ. կը քրքրէ զայն ու կը վերաշինէ, տալով անոր իր պայծառ ու ոստանիկ լեղուն, իւր մաքուր ու ընտիր աշխարհաբարը, իւր կորիճ, կարուկ, կոկիկ ոճը, իր ճեղող միտքը, վերլուծող ոգին։ Ինչպէս էր երբեմն՝ Մեսրոպ՝ իբրև քարտուղար արքունի Դիւանատան՝ իւր պաշտօնի ընդհանրական բերմամբը՝ ամէն կողմի, ամէն դասու հայոց դաւառաբարբառներուն

ծանօթ՝ հրրելով, մաղելով անոնք ամէնքը յօրինեց ոստանիկ գրաբարը, նոյնպէս և Մամուրեան՝ իբրև դիւանապետ Ազգ. Պատրիարքարանի, ուր կը հոսին, կը թափին ամէն կողմի և ամէն կարգի հայոց աղերսարկու, խնդրարկու պաշտօնական թէ անպաշտօն լեզուները, զտելով զանոնք կ'օժտէ Պատրիարքարանը պաշտօնական նոր ոստանիկ աշխարհաբարով մը, որուն սրբազան աւանդադապահն ու հարազատ ժառանգորդն է ամենուս համակրելին՝ Տիար Բարդող Թէլեան, Դիւանատան այժմու պատուական Պետը, որ ժառանգած աւանդն հետզհետէ շահեցուցած, ճոխացուցած է երկիւղած հաւատարմութեամբ և իրեն ընդոծին ու ընդաբոյս սրամտութեամբը։

Բոցաշխոյժ ու անխոնջ երիտասարդն Մամուրեան՝ նոյն ատեն իբրեւ Պատրիարքական առաջին օրինական գիւանապետ՝ Պատրիարքարանի չափ կը ծա, նօթանայ ընդհանուր Ազգին, և Ազգն՝ իրեն. և Պատրիարքարանի դործառնութեանց և դիւանական յարաբերութեանց հետ կ'ընհանրանայ նաև իւր գործունէութեան ու տաղանդին համբաւը. որով և իւր անունն ալ՝ այն ատենէն սկսեալ՝ աւելի կը ժողովրդանայ, Պատրիարքարանի անունին չափ։

(Շարունակելի)

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ԵՒ

ԻՒՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԻՏՈՒԹԻՒՆ կը կոչուի ոեւէ նիւթի վրայ մարդկային մտքի ծանօթութեանց ամբողջութիւնը, մանաւանդ այն ծանօթութիւնները, որք սուրդ սկզբանց վրայ հիմնեալ, դրութեան վերածուած են, իրենց յատուկ մէթոտի մը համաձայն եւ որք մասնաւոր ուսումնասիրութեան ու սերտողութեան առարկայ եղած։

Հին թէ նոր գիտուններ, իմաստասէրներ՝ գիտութիւնները դասաւորելու համար տեսակ տեսակ հնարածոյ, կամայական բաժանումներ յօրինած են, իրարմէ աւելի կամ նուազ իմաստուն սահմաններով ու բացատրութեամբ ճոխացնելով կամ խճողելով զանոնք։

Դպրութիւնք և Արուեստք. Գիտութեանց հետ՝ կը կազմեն մարդկային մտքին ընդարձակութիւնը կամ ամբողջութիւնը։

Մեր խմբագրած Հանրագիտակի Ա. թիւին մէջ թէեւ գրած էինք ուսմանց կարճ ու կոկիկ դասաւորում մը՝ մէն միոյն վրայ հակիրճ բացատրութիւններով. սակայն այս անգամ ալ կը ներկայացնենք ընթերցողաց ձեւով մը, աւելի որոշ ու մեկին բաժանում մը, որ աւելի պարզն է, և թէ սովորութիւնն ու մատենագրութիւնն ալ զայն ընդունած ու վաւերացուցած են։

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

—

1. Բնազանցական ու Բարոյական Գիտութիւններ։

Աստուածաբանութիւն. Բնական աստուածաբանութիւն և Աստուածգիտութիւն. յայտնեալ աստուածաբանութիւն. վարդապետութիւն. ծէս, մեկնաբանութիւն Սուրբ Գրոց։

Փիլիսոփայութիւն. հոգեբանութիւն, տրրամաբանութիւն, բնազանցաբանութիւն, բարոյագիտութիւն. գեղեցկագիտութիւն, մանկավարժութիւն։

Իրաւաբանութիւն. Բնութեան եւ Ազգաց իրաւագիտութիւն. քաղաքական իրաւագիտութիւն, վարչական իրաւագիտութիւն. քաղաքական և պատժական կամ եղեռնադատ իրաւագիտութիւն. եկեղեցական իրաւագիտութիւն։

2. Պատմական գիտութիւններ։

Քաղաքական պատմութիւն, եկեղեցական պատմութիւն. գրագիտական պատմութիւն, կենսագրութիւն, մատենագրութիւն։

Ժամանակագրութիւն, ծննդաբանութիւն, հնախօսութիւն (archéologie), հնագրութիւն (paléographie), դրամագիտութիւն, զինագիտութիւն (blason), աշխարհագրութիւն, ազգագրութիւն, վիճակագրութիւն։

3· ՄԱԹԻՄԱԹԻԳԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Զուտ մաթէմաթիգ· թուաբանութիւն, ալճէպրա, երկրաչափութիւն· կիրառական մաթէմաթիգ (mathématique appliquée)· մեքենագիտութիւն, աստղագիտութիւն, ծովագիտութիւն, ռազմայարդար, ֆիզիկական շինուածագիտութիւն (génie), կամրջաց, խճուղեաց, երկաթուղեաց եւն, շինուածագիտութիւն, մէդրագիտութիւն (métrologie)·

— —

4· ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ·
(Sciences physiques et naturelles)

Բնագիտութիւն· տեսաբանութիւն, լուսաբանութիւն, ջերմաբանութիւն, եղէքտրաբանութիւն, մագնիսաբանութիւն, մէտէօրաբանութիւն կամ օթերեւութագիտութիւն եւն·

Տարրաբանութիւն· անգործարանաւոր տարրագիտութիւն, գործարանաւոր տարրագիտութիւն·

Բնական պատմութիւն· հանքաբանութիւն, երկրաբանութիւն, բուսաբանութիւն-կենդանաբանութիւն, մարդաբանութիւն բաղդատական կազմագիտութիւն (anatomie comparée)·

Բժշկական գիտութիւնք· Մարդկային կազմագիտութիւն ու բնախօսութիւն, բժշկութիւն, ախտաբանութիւն, առողջաբանութիւն, գարմանատածութիւն (thérapeutique), վիրաբուժութիւն, դեղագիտութիւն, անասնաբուժութիւն (art vétérinaire)·

— —

5· ԿԱԽԱՐԴԱԿԱՆ կամ ԹԻՒՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
(Sciences occultes ou fausses sciences)

Ալքիմիաբանութիւն, աստղաբաշխութիւն, կապալ (*) (հրէական գաղտնագիտութիւն), մոգութիւն, ձեռնահմայութիւն (chiromancie). մեռելակոչութիւն (nécromancie), վհկութիւն (sorcellerie) եւն·

ԳՊՐՈՒԹԻՒՆ

Քերականութիւն, լեզուագիտութիւն (linguistique), բանասիրութիւն (philologie)·

Հռետորութիւն կամ ճարտասանութիւն եւ արձակ շարադրութեան ուսումը· ճառ եւ պերճախօսութեան այլ եւ այլ սեռերը· պատմութիւն, վիպասանութիւն, վարդապետական կամ յորդորական, նամակագրական սեռեր, եւն·

Բանաստեղծութիւն եւ ոտանաւոր շարադրութեան ուսումը· քնարերգական, դիւցազներգական կամ հագներգութիւն) գուսանական, երգիծաբանական, խրատական, նկարագրական, եղերգական բանաստեղծութիւններ·

Գրագիտական քննադատութիւն·

— —

ԱՐՈՒԵՍՏ

1· Գեղարուեստք (beaux-arts) և զարդարուեստք (arts d'agrément)·

Գծագրական արուեստներ· բուն գծագրութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, վիմագրութիւն, լուսանկարչութիւն կամ պատկերահանութիւն, փորագրութիւն, արձանագործութիւն, ճարտարապետութիւն· —երաժշտութիւն կամ ձայնագիտութիւն (musique)· տեսական կամ վարդապետական ձայնագիտութիւն· գործնական ձայնագիտութիւն (zolfège) այսինքն ձայնագիտութիւնը ուսուցանելու համար· երգերու, եղանակներու աստիճանաւորեալ հաւաքածոյքը)· ձայնական և գործիական երաժշտութիւն (musique vocale et instrumentale)· պարն եւ պարագիտութիւն (danse et chorégraphie)·—մարմնամարզութիւն· սրամարզութիւն, հեծելութիւն (équitation)· լողագիտութիւն (natation)·

Խաղեր· թատերական կամ դերասանական խաղեր և հասարակաց տօներ· միմոսական խաղեր, ձեռնածութիւն (prestidigitation) եւն·

Օգտակար արհեստներ· Մեքենակաց եւ ճարտարարուեստական արհեստներ· Արուեստաբանութիւն·

Արհեստներ՝ որք կը հայթայթեն նախնական նիւթերը· երկրագործական արհեստներ, որսորդութիւն, ձկնորսութիւն, կենդանաբուծութիւն (ընտանի անասուններ ժամեցնելու, զանոնք դարմանելու արհեստը), ձկնատածութիւն (pisciculture), մեղուաբուծութիւն (apiculture), մետաքսաբանութիւն

(*) Որուն բացատրութիւնն արդէն տրուած ենք մեր խմբագրած ՀԱՆՐԱԳԻՏԱԿի Ա· Շրջանի առաջին թիւէն սկսեալ·

sériciculture) այսինքն թթենեաց մշակութեան և շերամները կամ մետաքսորդը տածելու, բուծելու արհեստը. հանքերը, քարարահանքերը, աղահանքերը շահագործելու արհեստը։

Արհեստներ ու ճարտարագործութիւններ (Arts et industries) որք կը նախապատրաստեն նախապատրաստ նիւթերը, գործատուներ (ֆապրիգաներ), ձեռագործատունք (manufactures) և արհեստանոցք (usine՝, ինչպէս և դարբնոցները. ճուլարանները, և. մանարան (filature) ,հիւսարան, (tissage), ասուարարութ՝ մուշտակագործութիւն, խաղաղորդութիւն, ներկարարութիւն, մետաղագործութիւն, զտարարութիւն, (affinage). քիմիական կամ տարրագիտական արտադրութեանց, վառօդի, բորակի, զտումի և. արհեստագործութիւնը։

Արհեստներ և ճարտարագործութիւններ որ կը բանին, կը շահագործեն նախապատրաստուած նիւթերը։ Սննդագործ արհեստներ. հացագործութիւն, մսագործութիւն, , ըմպելաշինութիւն (գինի, գարեջուր, մրրգօղի, ալքօլ, և. խոհագործական արհեստ (art culinaire). հողարարութիւն. — հանդերձագործ արհեստներ (arts d'habillement) .դերձակութիւն, խուրարար (այսինքն ո և է տեսակ գլխարկ շինելու արհեստը) կօշկակարութիւն, ձեռնոցագործութիւն, կար ու կարկտուք. և. — կառուցանելու ու կահաւորելու արհեստներ. հիւսնութիւն, ատաղձագործութիւն, կահագործութիւն, երկաթագործութիւն, կղպագործութիւն (serrurrie),դրուագագործութիւն(peinture) ծխնելուզագործութիւն (fumisterie). էպէնագործութիւն, գորգաշինութիւն, և. — բրուտական արհեստներ (arts céramiques). պնակագործութիւն (potrerie), ապակեգործութիւն (vitrerie). — պերճանքի, շռայլանքի արհեստներ (art de luxe), ոսկերչութիւն, գոհարագործութիւն ((bijouterie) զարդագործութիւն (joaillerie), (կանանց զարդի համար թանկագին մետաղներով պատճուճանքներ շինելու արհեստը). —ճարտարարհեստի գործիներ. հողագործական մեքենաներ, դգալագործութիւն, զինագործութիւն. մաթէմաթիգի, տեսողութեան կամ աչքի եւն. վերաբերեալ գործիներու, նուագարանաց գործիներու արհեստները. տպագրական արհեստներ. թղթագործութիւն, տպագրութիւն, գրավաճառութիւն, և. —առեւտրական ճարտարարհեստ. վաճառաշահութիւն, տուրեւառ, ապրանքակամ վաճառաց փոխադրութիւն. լումայափոխութիւն, վաճառագիտութիւն, սեղանաւորութիւն։

Շատ մը գործեր հրատարակուած են երկու դարէ ի վեր ամէն երկիրներու մէջ, գիտութեանց ամբողջն ի միասին ներկայացնելու համար. ոմանք մեթոտաւոր գրքերու միջոցաւ, ոմանք ալ Հանրագիտակ(*) կոչուած բառարաններու ձեւով։ Ահա գրեթէ լիակատար ցանկ ու ցուցակ մը Գիտութեանց, Դպրութեանց ու Արհեստից, իրենց բառական անուններովը դասաւորուած, ընդգրկած ճիւղերուն եւ ճառած նիւթերուն համաձայն, որոց մէն միոյն վրայ կարդաւ և հետզհետէ պիտի գրուին, գրական, գրագիտական եւ արհեստագիտական աշխարհին մէջ իրենց արտադրած վերջին բաղդատականու ճշդեալ արդիւնքներուն համեմատ. կարող ու ձեռնհաս մասնագէտներու կողմանէ, եւ նոր մէթոտներուն համաձայն։

(*) Տես Հանրագիտակի բացատրութիւնը՝ Ա. տարւոյն Ծրագիր վերնագրով անջատ յայտարարութեան մէջ։

Հանրագիտակի տոմրական Հարցարանին վրայ պիտի յաւելունք նաեւ Գիտութեանց, Դպրութեանց և Արուեստից բառերը բացատրող Բառարան մ՝ալ՝ ճշդելու, սահմանելու համար անոնց իմաստներն և պէս պէս առումները։

ԶԳՄԵՂԱՆՔԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿի սոյն Ցապտղումը և մեր Շնորհաւորական Հեռագրին վրիպումը՝ մեր կամքէն անկախ՝ Պոհեմիան կամ Սալմասիան հաւատի տէր ծանօթ Մէկոի մը վերադրելի կամ մեղադրելի է։

Արտաճատէր - Արմէն Լուսինեան

Տպագրութիւն ՄԱԼԻԻՄԱԹ - ԹԱՀԻՐ ՊԷՑ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Խմբագրութեան վերաբերեալ գրութիւնք եւ պէտք եղած տեղեկութիւնք պէտք է յղել՝ Կ. Պոլիս, Մէրճան Զարշը. Ազգ. ծանօթ գրախանաւ՝ Ազնիւ ՄԱՐԴԱՐԵԱՆ ԷՖԷՆԴԻՆ ԴՐԱՏՈՒՆԸ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Մամուրեանի *գիրկ գրաւոր* Լուսանկարն եւ Կենսագրականը
Յոթերորդ Հատորը
Գիրքերուն եւ իր բաժանումները
Ազգային. Գիրքեր եւ Դէպքեր.

ԳԻՆ 40 ՓԱՐԱ

Կը ծախուի ամէն գրախանութներ եւ ուրիշներ ամէն գաւառի գործակալներուն.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱԼԻՄԱՍ — ԹԱՀԻՐ ՊԷԿ

Պապ-Ալի ճաստէսի, թիւ 40

Կ. ՊՈԼԻՍ